

	Անձնական տվյալների մշակման և պաշտպանության քաղաքականություն	Կոդ՝ 16.01.6	Խմբագրություն՝ 1.0
		Հաստատված է Բանկի Խորհրդի 18.07.2024թ. որոշմամբ ընդհանուր-հասանելի	

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	2
ԳԼՈՒԽ 2. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ	2
ԳԼՈՒԽ 3. ՄՇԱԿՎՈՂ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԾԱՎԱԼԸ	3
ԳԼՈՒԽ 4. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԵՎ ՄՇԱԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ	5
ԳԼՈՒԽ 5. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ	6
ԳԼՈՒԽ 6. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՍՈՒԲՅԵԿՏԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ	6
ԳԼՈՒԽ 7. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԲԱՆԿԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ	6
ԳԼՈՒԽ 8. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՍԿՈՈՒԹՅՈՒՆ	6
ԳԼՈՒԽ 9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ	7
ԳԼՈՒԽ 10. ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ	9

	Անձնական տվյալների մշակման և պաշտպանության քաղաքականություն	Կոդ՝ 16.01.6	Խմբագրություն՝ 1.0
		Հաստատված է Բանկի Խորհրդի 18.07.2024թ. որոշմամբ	
ընդհանուր-հասանելի			

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1** Յունիքանկ բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) Անձնական տվյալների մշակման և պաշտպանության քաղաքականությունը (այսուհետ՝ Քաղաքականություն) սահմանում է Բանկի մոտեցումներն անձնական տվյալների մշակման և անվտանգության ապահովման հարցում:
- 1.2** Սույն Քաղաքականությունը մշակված է Անձնական տվյալների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան:
- 1.3** Սույն Քաղաքականությունը վերաբերում է Բանկի բոլոր տեխնոլոգիական գործընթացներին, որոնք կապված են սուբյեկտների անձնական տվյալների մշակման և պահպանման հետ:
- 1.4** Սույն Քաղաքականության պահանջները տարածվում են Բանկի բոլոր աշխատողների և ղեկավարների վրա:
- 1.5** Սույն Քաղաքականության պահանջները և դրույթները, անհրաժեշտության դեպքում, կարող են ավելի մանրամասն շարադրվել Բանկի այլ ներքին իավական ակտերում:
- 1.6** Սույն Քաղաքականության մեջ կիրառվող հիմնական հասկացություններն իրենց իմաստով համապատասխանում են Անձնական տվյալների պաշտպանության մասին ՀՀ օրենքով սահմանված հիմնական հասկացություններին:

ԳԼՈՒԽ 2. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԸ

- 2.1** Անձնական տվյալների մշակումը Բանկում իրականացվում է հետևյալ սկզբունքների հիման վրա՝
 - անձնական տվյալների մշակման նպատակների և մեթոդների օրինականությունը,
 - անձնական տվյալների մշակման նպատակների համապատասխանությունը անձնական տվյալների հավաքագրման ժամանակ սահմանված և նշված նպատակներին, ինչպես նաև Բանկի իրավասություններին,
 - մշակվող անձնական տվյալների բովանդակության և ծավալի, անձնական տվյալների մշակման մեթոդների համապատասխանությունն անձնական տվյալների մշակման նպատակներին,
 - անձնական տվյալների ճշգրտության, բավարարության և ակտուալության ապահովում՝ կապված դրանց մշակման նպատակների հետ,
 - անձնական տվյալների պահպանումն այնպիսի ձևով, որը հնարավորություն կտա բացահայտել անձնական տվյալների առարկան ոչ ավելի, քան պահանջվում է մշակման նպատակների համար,
 - անձնական տվյալների ոչնչացում մշակման նպատակներին հասնելու դեպքում այնպես, որ բացառվի դրանց վերականգնման հնարավորությունը:
- 2.2** Անձնական տվյալների մշակման իրավունք ունեցող Բանկի աշխատակիցները պարտավոր են.
 - 2.2.1** իմանալ և խստորեն պահպանել Անձնական տվյալների պաշտպանության մասին ՀՀ օրենքի և սույն Քաղաքականության դրույթները և պահանջները,
 - 2.2.2** մշակել անձնական տվյալները միայն իրենց ծառայողական պարտականությունների շրջանակներում,

	Անձնական տվյալների մշակման և պաշտպանության քաղաքականություն	Կող՝ 16.01.6	Խմբագրություն՝ 1.0
		Հաստատված է Բանկի Խորհրդի 18.07.2024թ. որոշմամբ ընդհանուր-հասանելի	

2.2.3 չիրապարակել Բանկի կողմից մշակվող անձնական տվյալները,

2.2.4 զեկուցել անմիջական ղեկավարին այլ անձանց գործողությունների մասին, որոնք կարող են հանգեցնել սույն քաղաքականության դրույթների և պահանջների խախտման մասին,

2.2.5 սույն Քաղաքականության պահանջների խախտման մասին իրենց հայտնի փաստերը զեկուցել Անձնական տվյալների պաշտպանության պատասխանատուին:

2.3 Անձնական տվյալների պահպանումն իրականացվում է այնպիսի ձևով, որը հնարավորություն է տալիս նույնականացնել անձնական տվյալների սուբյեկտին, ոչ ավելի, քան պահանջվում է դրանց մշակման նպատակներով, բացառությամբ այն դեպքերի, երբ անձնական տվյալների պահպանման ժամկետը սահմանված է ՀՀ օրենսդրությամբ կամ Բանկի հետ կնքված պայմանագրով և անձնական տվյալների սուբյեկտը հանդիսանում է տվյալ պայմանագրի կողմ, շահառու կամ երաշխավոր:

2.4 Անձնական տվյալների մշակման պայմանները և ժամկետները որոշվում են դրանց մշակման նպատակներին, ՀՀ օրենսդրության և ՀՀ ԿԲ ներքին իրավական ակտերին համապատասխան:

2.5 Անձնական տվյալների կազմը և շրջանակները որոշելիս Բանկն առաջնորդվում է անձնական տվյալների նվազագույն անհրաժեշտ կազմով՝ տվյալ անձնական տվյալների ձեռքբերման նպատակներին հասնելու համար:

2.6 Անձնական տվյալների անվտանգությունը Բանկում ապահովվում է համաձայնեցված միջոցառումների իրականացմամբ, որոնք ուղղված են անձնական տվյալների անվտանգությանը սպառնացող վտանգների կանխարգելմանը (չեզոքացմանը) և վերացմանը, հնարավոր վնասը նվազագույնի հասցնելուն:

ԳԼՈՒԽ 3. ՄՇԱԿՎՈՂ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԾԱՎԱԼԸ ԵՎ ԿԱՐԳԸ

3.1 Բանկը մշակում է օրենքով սահմանված կարգով հետևյալ ֆիզիկական անձանցից ստացված անձնական տվյալները՝

- Բանկի բաժնետերեր,
- Բանկի ղեկավարներ,
- Բանկի աշխատողներ,
- Բանկի աշխատողների ընտանիքի անդամներ,
- Բանկի հետ փոխկապակցված անձինք,
- Ֆիզիկական անձինք և անհատ ձեռնարկատերերը, նրանց օրինական ներկայացուցիչները, ովքեր մտադիր են կամ ունեն Բանկի հետ պայմանագրային և այլ քաղաքացիական իրավահարաբերություններ (Բանկին ծառայություններ մատուցող անձինք, վարկառուներ/փոխառուներ, գրավատուներ, երաշխավորներ, ավանդատուներ, բանկային հաշիվների սեփականատերեր, քարտապաններ, բանկային պահատուփեր վարձակալող անձինք, վճարումներ ուղարկողներ և ստացողներ և Բանկի ֆինանսական ծառայություններից օգտվող այլ անձինք), ինչպես նաև այլ անձինք, որոնց անձնական տվյալների մշակումն անհրաժեշտ է նշված պայմանագրային և քաղաքացիական այլ հարաբերությունների առաջացման և (կամ) կատարման համար (օրինակ, վարկառուի, երաշխավորի, գրավատուի ամուսին, խնամակալ, ժառանգ(ներ) և այլն):
- Բանկի հաճախորդի հետ քաղաքացիական իրավահարաբերությունների մեջ գտնվող ֆիզիկական անձինք, որոնց շահերից ելնելով հաճախորդն իրականացնում է ֆինանսական գործարքներ (վճարումներ).
- իրավաբանական անձանց իրական շահառուներ,

	Անձնական տվյալների մշակման և պաշտպանության քաղաքականություն	Կոդ՝ 16.01.6	Խմբագրություն՝ 1.0
		Հաստատված է Բանկի Խորհրդի 18.07.2024թ. որոշմամբ	

ընդհանուր-հասանելի

- Ֆիզիկական անձինք՝ իրավաբանական անձանց ներկայացուցիչներ, որոնք իրավասու են և/կամ լիազորված են հանդես գալ բանկում իրավաբանական անձի անունից,
- Ֆիզիկական անձինք, ովքեր աշխատանքներ են իրականացնում և/կամ ծառայություններ են մատուցում Բանկի համար՝ Բանկի հետ կնքված պայմանագրերի շրջանակներում,
- Բանկի նախկին աշխատողներ և ղեկավարներ,
- թափուր պաշտոնների թեկնածուներ,
- ստաժորներ, պրակտիկանտներ,
- ապրանքների և ծառայությունների մատակարարների ընտրության մրցույթների մասնակիցներ,
- Ֆիզիկական անձինք, որոնց տրամադրվում են համապատասխան անցագրեր՝ Բանկի գործունեության տարածք մուտք գործելու և այնտեղ գտնվելու համար,
- նամակագրություն առաքող անձինք (օրինակ, սուրհանդակներ):

3.2 Անձնական տվյալների կազմը որոշելիս Բանկն առաջնորդվում է անձնական տվյալների նվազագույն անհրաժեշտ ցանկով՝ անձնական տվյալների մշակման նպատակներին հասնելու համար:

3.3 Մշակվող անձնական տվյալները կարող են ներառել՝

3.3.1 Ազգանուն, անուն, հայրանունը (առկայության դեպքում),

3.3.2 Սեռը,

3.3.3 Ծննդյան ամսաթիվը (ծննդյան օր, ամիս և տարի),

3.3.4 Ծննդավայրը, ծննդյան երկիրը,

3.3.5 Հասցեն (բնակության հասցե, գրանցման հասցե),

3.3.6 Տեղեկություններ քաղաքացիության, կարգավիճակի մասին (ռեզիդենտ/ոչ ռեզիդենտ) ,

3.3.7 Սոցիալական կարգավիճակը (ներառյալ վճարվող սոցիալական նպաստների մասին տեղեկատվությունը),

3.3.8 Տեղեկություններ հաճախորդին պատկանող գույքի մասին,

3.3.9 Կոնտակտային տվյալներ (հեռախոս, էլ. փոստ, փոստային հասցե),

3.3.10 Կրթությունը, աշխատանքի վայրը, պաշտոնը, եկամուտները, տեղեկատվություն աշխատանքային գործունեության մասին,

3.3.11 Քաղաքացիական կացության ակտերում նշված տեղեկությունները,

3.3.12 Երեխաների ծննդյան վկայականներում նշված տեղեկությունները,

3.3.13 Անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի տվյալները,

3.1.14 Վարորդական իրավունքի տվյալները,

3.1.15 ՀՎՀՀ (անհատ ձեռնարկատերերի դեպքում),

3.1.15 Վարկային պատմությունը,

3.1.16 Հաճախորդի լուսանկարներ և տեսանյութեր,

3.1.17 Բանկի ծառայություններից օգտվելու համար կիրառվող սարքերի տեսակները և պարամետրերը,

3.1.18 IP հասցեն համացանցում, որն օգտագործվում է անձնական տվյալների սուբյեկտի կողմից Բանկի հետ փոխգործակցության ընթացքում ներառյալ հեռահար բանկային համակարգին միանալու համար,

3.1.19 այլ տեղեկատվություններ:

	Անձնական տվյալների մշակման և պաշտպանության քաղաքականություն	Կողմ 16.01.6	Խմբագրություն՝ 1.0
		Հաստատված է Բանկի Խորհրդի 18.07.2024թ. որոշմամբ	

ընդհանուր-հասանելի

ԳԼՈՒԽ 4. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԵՎ ՄՇԱԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

- 4.1** Անձնական տվյալների մշակումը սահմանափակվում է կոնկրետ, նախապես սահմանված և օրինական նպատակների իրագործմամբ:
- 4.2** Անձնական տվյալների հավաքագրման նպատակների հետ անհամատեղելի անձնական տվյալների մշակումը չի թույլատրվում:
- 4.3** Մշակման ենթակա են միայն անձնական տվյալները, որոնք համապատասխանում են դրանց մշակման նպատակներին:
- 4.4** Անձնական տվյալների մշակումն իրականացվում է Բանկի կողմից հետևյալ նպատակներին հասնելու համար՝
- 4.4.1** իրականացնել բանկային գործառնություններ և Բանկի կանոնադրությամբ նախատեսված այլ գործունեություն՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից Բանկին տրամադրված լիցենզիայի շրջանակներում,
- 4.4.2** տվյալ ֆիզիկական անձին ֆինանսական կամ այլ ծառայություններ մատուցելու հնարավորության քննարկում,
- 4.4.3** հաշվետվությունների տրամադրում ՀՀ կենտրոնական բանկին և պետական մարմիններին՝ ՀՀ գործող օրենսդրության պահանջներին համապատասխան,
- 4.4.4** հանցագործությունից ստացված եկամուտների օրինականացման փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջոցառումների իրականացում,
- 4.4.5** հաճախորդի վարկային պատմության վերաբերյալ տվյալների ձևավորում և ստացում,
- 4.4.6** ֆիզիկական և իրավաբանական անձանց, պատվիրատուների և կոնտրագենտների հետ պայմանագրերի կնքումը, կատարումը և դադարեցումը և/կամ համատեղ նախագծերի իրականացում,
- 4.4.7** դիմումների և պահանջների լուծմանն ուղղված միջոցառումների և անհրաժեշտ գործողությունների իրականացում. սպասարկման որակի հետ կապված հաճախորդների հաղորդագրությունների մշակում,
- 4.4.8** հաճախորդի հաշվից խարդախության, միջոցների հափշտակության, այլ անօրինական գործողությունների բացահայտում, հետազայում նման անօրինական գործողությունների կանխարգելում և նման գործողությունների հետևանքների տեղայնացում,
- 4.4.9** ընդունելություն ուսումնական հաստատությունների ուսանողների և շրջանավարտների պրակտիկայի ներածական, կրթական, արդյունաբերական կամ նախադիպլոմային պրակտիկայի համար,
- 4.4.10** անձնական տվյալների սուբյեկտի հետ աշխատանքային պայմանագրի կնքման հնարավորության դիտարկում,
- 4.4.11** հաճախորդին/ կոնտրագենտին ստուգելու նպատակով միջոցառումների իրականացում նախքան նրա հետ պայմանագիր կնքելը.
- 4.4.12** հաճախորդին տեղեկատվության տրամադրում կատարված գործարքների մասին,
- 4.4.13** Բանկի նկատմամբ ունեցած պարտքի մասին (ներառյալ պարտքի մարման չափը և ժամկետները) տեղեկացնելու նպատակով հեռախոսային և այլ տեսակի կապի իրականացում,
- 4.4.14** ժամկետանց/խնդիր պարտքերի հավաքագրում,
- 4.4.15** Բանկի կողմից անձնական տվյալների փոխանցում կամ դրանց մշակման հանձնարարում երրորդ անձանց՝ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան,
- 4.4.16** անձնական տվյալների մշակման երրորդ կողմի հանձնարարականի կատարումը ՀՀ գործող օրենսդրության պահանջներին համապատասխան,

	Անձնական տվյալների մշակման և պաշտպանության քաղաքականություն	Կոդ՝ 16.01.6	Խմբագրություն՝ 1.0
		Հաստատված է Բանկի Խորհրդի 18.07.2024թ. որոշմամբ	

ընդհանուր-հասանելի

4.4.17 ՀՀ գործող օրենսդրությամբ Բանկին վերապահված այլ գործառույթների, լիազորությունների և պարտականությունների իրականացում:

ԳԼՈՒԽ 5. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

5.1 Անձնական տվյալների մշակումն իրականացվում է Բանկի կողմից՝ ՀՀ գործող օրենսդրության պահանջներին համապատասխան:

5.2 Անձնական տվյալների մշակումն իրականացվում է անձնական տվյալների սուբյեկտների համաձայնությամբ՝ նրանց անձնական տվյալների մշակման համար, ինչպես նաև առանց դրա՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում:

5.3 Անձնական տվյալների մշակման համաձայնությունը կարող է տալ անձնական տվյալների սուբյեկտը կամ նրա ներկայացուցիչը՝ Բանկի կողմից սահմանված ձևով:

5.4 Անձնական տվյալների մշակման համաձայնությունը տրվում է պայմանագրերի գործողության կամ Բանկի և հաճախորդի միջև գործարար հարաբերությունների ողջ ժամանակահատվածի համար, կամ տվյալներ մշակելու նպատակներն իրականացնելու համար օբյեկտիվորեն անհրաժեշտ ժամկետով:

5.5 Անձնական տվյալների մշակումն իրականացվում է անձնական տվյալների հավաքագրման ժամանակ կանխորոշված և սահմանված նպատակների, ինչպես նաև ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված Բանկի լիազորությունների և Բանկի աշխատակիցների, հաճախորդների և գործընկերների հետ պայմանագրային հարաբերությունների համաձայն:

5.6 Բանկն իրականացնում է անձնական տվյալների ինչպես ավտոմատացված, այնպես էլ ոչ ավտոմատացված մշակում:

5.7 Բանկն իրավունք ունի անձնական տվյալների սուբյեկտի համաձայնությամբ վստահել անձնական տվյալների մշակումն այլ անձի, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ, տվյալ անձի հետ կնքված պայմանագրի հիման վրա, պայմանով. այն է՝ պահպանել անձնական տվյալների գաղտնիությունը, ինչպես նաև մշակված անձնական տվյալների պաշտպանության պահանջները:

5.8 Բանկի աշխատակիցներն ունեն հասանելիություն անձնական տվյալների թղթային և էլեկտրոնային տարբերակներին՝ իրենց աշխատանքային պարտականություններին և իրավասություններին համապատասխան:

5.9 Անձնական տվյալները չեն տրամադրվում երրորդ անձանց կամ այլ կերպ չեն տարածվում առանց անձնական տվյալների սուբյեկտի համաձայնության, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ:

5.10 Պետական մարմինների ներկայացուցիչները ստանում են հասանելիություն Բանկում մշակվող անձնական տվյալներին ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափով և կարգով:

5.11 Հաճախորդի կողմից անձնական տվյալների մշակման մասին համաձայնության գրավոր հետ կանչման, կամ անձնական տվյալների ուղղում կամ ոչնչացում (եթե անձնական տվյալներն ամբողջական կամ ճշգրիտ չեն կամ հնացած են կամ ձեռք են բերվել անօրինական ճանապարհով կամ անհրաժեշտ չեն մշակելու նպատակներին հասնելու համար) կատարելու պահանջ ներկայացնելու դեպքում՝ Բանկը պարտավորվում է դադարեցնել անձնական տվյալների մշակման գործողությունները կամ ուղղել կամ ոչնչացնել անձնական տվյալները 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում, եթե հաճախորդի և Բանկի միջև առկա չեն չկատարված պարտավորություններ և բացակայում են գործող պայմանագրային հարաբերություններ, այլապես հաճախորդի և Բանկի միջև պայմանագրային հարաբերություններն ենթակա են դադարեցման՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով:

	Անձնական տվյալների մշակման և պաշտպանության քաղաքականություն	Կող՝ 16.01.6	Խմբագրություն՝ 1.0
		Հաստատված է Բանկի Խորհրդի 18.07.2024թ. որոշմամբ	

ընդհանուր-հասանելի

5.12 Հաճախողի անձնական տվյալների մշակման մասին համաձայնության հետ կանչման կամ անձնական տվյալների ոչնչացում պահանջելու դեպքում հաճախողի անձնական տվյալները դադարում են մշակվել Բանկի կողմից, սակայն դրանք պահպանվում են Բանկի տեղեկատվական արխիվում և կարող են օգտագործվել միայն օրենսդրությամբ նախատեսված դեպքերում:

5.13 Անձնական տվյալների մշակման մասին համաձայնության հետ կանչը հետադարձ ուժ չունի:

ԳԼՈՒԽ 6. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՍՈՒԲՅԵԿՏԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

- 6.1** Տվյալների սուբյեկտն իրավունք ունի ստանալու տեղեկություններ իր անձնական տվյալների, տվյալները մշակելու, մշակելու հիմքերի և նպատակների, տվյալները մշակողի, նրա գտնվելու վայրի մասին, ինչպես նաև այն անձանց շրջանակի մասին, որոնց կարող են փոխանցվել անձնական տվյալները:
- 6.2** Տվյալների սուբյեկտն իրավունք ունի ծանոթանալու իր անձնական տվյալներին, մշակողից պահանջելու ուղղել, ուղեփակել կամ ոչնչացնել իր անձնական տվյալները, եթե անձնական տվյալներն ամբողջական կամ ճշգրիտ չեն կամ հնացած են կամ ձեռք են բերվել անօրինական ճանապարհով կամ անհրաժեշտ չեն մշակելու նպատակներին հասնելու համար:
- 6.3** Տվյալների սուբյեկտին անձնական տվյալները Բանկի կողմից տրամադրվում են տվյալների սուբյեկտի կամ լիազորագրով հանդես եկող ներկայացուցչի կամ օրինական ներկայացուցչի գրավոր հարցման հիման վրա:
- 6.4** Սույն Քաղաքականության 6.3 կետում նշված հարցումը կարող է ներկայացվել նաև էլեկտրոնային եղանակով՝ հաստատված էլեկտրոնային թվային ստորագրությամբ:
- 6.5** Տեղեկությունները տվյալների սուբյեկտին Բանկի կողմից տրամադրվում են անվճար, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:
- 6.6** Անձնական տվյալների սուբյեկտները պատասխանատու են Բանկին հավաստի տեղեկատվություն տրամադրելու, ինչպես նաև ցանկացած փոփոխության դեպքում տրամադրված տվյալների ժամանակին թարմացման համար:

ԳԼՈՒԽ 7. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԲԱՆԿԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

- 7.1** Անձնական տվյալները մշակելու ընթացքում Բանկը կիրառում է գաղտնագրման միջոցներ՝ անձնական տվյալներ պարունակող տեղեկատվական համակարգերի պաշտպանվածությունը պատահական կորստից, տեղեկատվական համակարգեր անօրինական մուտք գործելուց, անձնական տվյալների անօրինական օգտագործումից, ձայնագրումից, ոչնչացումից, վերափոխումից, ուղեփակումից, կրկնօրինակումից, տարածումից և այլ միջամտությունից ապահովելու համար:
- 7.2** Բանկը կանխում է անձնական տվյալների մշակման համապատասխան տեխնոլոգիաների մատչելիությունը դրա իրավունքը չունեցող անձանց համար և ապահովում է, որ այդ համակարգերի օրինական օգտագործողի համար հասանելի լինեն միայն իր կողմից մշակման ենթակա տվյալները և այն տվյալները, որոնցից թույլատրված է օգտվել:

	Անձնական տվյալների մշակման և պաշտպանության քաղաքականություն	Կող՝ 16.01.6	Խմբագրություն՝ 1.0
		Հաստատված է Բանկի Խորհրդի 18.07.2024թ. որոշմամբ	

ընդհանուր-հասանելի

7.3 Անձնական տվյալների պաշտպանությունն ապահովելու նպատակով Բանկը կարող է մինչև տվյալ հաճախորդի հետ գործարար հարաբերությունների հաստատումը, ինչպես նաև գործարար հարաբերությունների ընթացքում կիրառել հաճախորդի տվյալների վերիֆիկացում (ստուգում)՝ բջջային հեռախոսի, էլեկտրոնային փոստի հասցեի և/կամ Բանկի համար ընդունելի որևէ այլ միջոցով:

7.4 Բանկի կողմից բացահայտվում են անձնական տվյալների անվտանգությանը սպառնացող վտանգները՝ անձնական տվյալների տեղեկատվական համակարգերում դրանց մշակման ընթացքում:

7.5 Անձնական տվյալները կարող են պահպանվել նաև Բանկի և/կամ Բանկի հետ համագործակցող համապատասխան կազմակերպությունների ամպային սերվերների վրա՝ Բանկի գործունեության տարածքից դուրս:

7.6 Բանկի կողմից կիրառվում են կազմակերպչական և տեխնիկական միջոցներ անձնական տվյալների անվտանգությունն ապահովելու համար՝ անձնական տվյալների տեղեկատվական համակարգերում մշակման ընթացքում, որոնք անհրաժեշտ են անձնական տվյալների պաշտպանության պահանջները բավարարելու համար:

7.7 Բանկի կողմից սահմանվում են տեղեկատվական համակարգերում մշակվող անձնական տվյալների հասանելիության կանոններ:

7.8 Բանկի կողմից միջոցներ են ձեռնարկվում՝ բացառելու անձնական տվյալներին չարտոնված մուտքի դեպքերը:

7.9 Բանկի կողմից կիրառվում են մուտքի հնարավորությունները նվազագույնի հասցնելու միջոցներ, մուտքի վերահսկման միջոցներ (մուտքի սուբյեկտների նույնականացում, մուտքի անհաջող փորձերի քանակի սահմանափակում) և պաշտպանության այլ միջոցներ:

ԳԼՈՒԽ 8. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

8.1 Բանկում սույն Քաղաքականության պահանջներին համապատասխանության հսկողությունն իրականացնում է Անձնական տվյալների պաշտպանության պատասխանատուն, ով նշանակվում է Բանկի Վարչության նախագահի հրամանով:

8.2 Ներքին Աուդիտը տարեկան առնվազն մեկ անգամ ուսումնասիրում է անձնական տվյալների մշակման և պահպանման գործընթացի կազմակերպումը Բանկում և գնահատում է դրա արդյունավետությունը և համապատասխանությունը գործող օրենսդրությանը:

8.3 Ուսումնասիրության արդյունքներն ամփոփվում են և ներկայացվում են Բանկի Վարչության և Խորհրդի դիտարկմանը:

8.4 Անձնական տվյալներ մշակող Բանկի աշխատակիցների պատասխանատվությունն անձնական տվյալների մշակումն ու պաշտպանությունը կարգավորող նորմերի պահանջներին չհամապատասխանելու համար որոշվում է ՀՀ օրենսդրության և Բանկի ներքին իրավական ակտերին համապատասխան:

ԳԼՈՒԽ 9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1 Սույն Քաղաքականությունն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

9.2 Քաղաքականությունն ենթակա է վերանայման և թարմացման՝ սույն Քաղաքականությամբ սահմանված շրջանակի վրա ազդող օրենսդրական և նորմատիվ ակտերում փոփոխությունների դեպքում:

	Անձնական տվյալների մշակման և պաշտպանության քաղաքականություն	Կոդ՝ 16.01.6	Խմբագրություն՝ 1.0
		Հաստատված է Բանկի Խորհրդի 18.07.2024թ. որոշմամբ	

ընդհանուր-հասանելի

9.3 Քաղաքականության նոր խմբագրությունը տեղադրվում է Բանկի պաշտոնական կայքում:

ԳԼՈՒԽ 10. ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Խմբագրման համար	Խմբագրման ամսաթիվ և որոշում	Խմբագրման նկարագրություն
1	Խորհրդի 18.07.2024թ. որոշում	